

—≡ Ս Ի Ո Ն ≡—

Լ.Ա. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1957

✂ Մ Ա Ր Տ ✂

ԹԻԻ 3



Վ.Ա.ԶԳԷՆ ԾԱՌԱՅ ՅԻՍՈՒՍԻ ՔՐԻՍՏՈՍԻ
ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲԸ ԱՍՏՈՒՄՈՅ ԵՒ ԿԱՄՕՔՆ ԱԶԳԻ
ՆՊԻՍԱՆՈՒՄԱՊԵՏ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ
ՄԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԺ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵՄԱՐ
ԱԹՈՒՈՅ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ՆԿԵՂԵՑԻՈՑ
ՄՐԲՈՑ ԷԶՄԻԱՍԵՆԻ

ՈՂՋՈ՞ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՆԿԵՂԵՑԻՈՑ
ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ԵՊԻՍԿՈՊՈՍԱՑ, ՎԱՐԴԱՊԵՏԱՑ, ՔԱՀԱՆԱՅԻՑ ԵՒ ՍԱՐԿԱԻԱԳԱՑ

Սիրեցեալ և հարազատ եղբայրներ Մեր ի Գրիստոս, զինուորեալ սպա-
սաւորներ Ս. Նկեղեցւոյս.

Միասիրտ և միախորհուրդ դիմաւորեցինք անգամ մը ևս մեծ և սքան-
չելի աւետիսը մեր Փրկչին Յիսուսի Ս. Ծննդեան և Աստուածայայտնութեան՝
այն հաստատ հաւատքով, թէ ամէն տարի մեզ բաշխուող այս աւետիսը կրնայ
օգնել մեզ հանելու մեր հին զգեստները, դառնալու համար նոր մարդեր, ինչ-
պէս կը պատուիրէ մեծ առաքեալը՝ «զգեցնուլ ցնոր մարդն՝ որ ըստ Աստուծոյն
հաստատեալ է արդարութեամբ եւ սրբութեամբ նմարսութեանն» (Եփես. Դ. 24):

նոր՝ ոչ արտաքին զգեստներով, ի ցոյց մարդկան, այլ հոգիով նոր, յետ անկեղծ ու խոր ինքնավերանորոգման: Այլապէս պիտի նմանէինք այն կեղծաւոր փարիսեցիներուն, որոնք «սրբեն զարսափին զբաժակին եւ զսկաւառակին, եւ ի ներքոյ լի են յափօսակութեամբ եւ անխառնութեամբ» (Մատթ. ԻԳ. 25):

Ի՞նչ վսեմ եւ ի՞նչ գեղեցիկ է հոգեւոր կոչումը քահանայական, այն է՝ միջնորդ հանդիսանալ եւ օգնել որ մեր ժողովրդի զաւակները սորվին Աստուծոյ մօտենալ եւ իրենց հոգիներու փրկութեան ճանապարհը գտնել: Աստուածային սիրոյ զործիքներն էք Գուք Ձեր հաւատացեալներու ծոցին մէջ, ուսուցանող էք եւ դաստիարակ, սրբացնող եւ մխիթարող, եւ բոլորի համար անխտիր՝ զթառաւ հոգեւոր հայրեր: Գուք կոչուած էք առաջնորդելու Ձեզ յանձնուած հօտը, նման բարի եւ քաջ հովուին, որ «զանձն իւր զնէ ի վերայ ոչխարաց»: Իշխանութիւնը, զոր ունիք, ամէն բանէ առաջ նուիրումի եւ ծառայութեան աշխատանք մըն է: Չմոռնանք Տիրոջ խօսքը՝ «Որ մեծն է ի ձեզ՝ եղիցի իբրեւ զկրտսերն, եւ առաջնորդն իբրեւ զսպասաւորն» (Գովկ. ԻԲ. 27):

Իշխանութեան ծարաւը պէտք է յազեցնենք ծառայելով: Եկեղեցիին մէջ իշխել կը նշանակէ ծառայել: Եկեղեցիին մէջ առաջնորդել կը նշանակէ նուիրուիլ: Եկեղեցիին մէջ բարձրանալ կը նշանակէ «մեծանալ գործով բարութեան» (Ա. Տիմ. Զ. 18): Բարձրանալ՝ հաւատքով ու բարի գործերով, բարձրանալ՝ խոնարհութեամբ եւ պարկեշտութեամբ, բարձրանալ՝ բարձրացում չկամենալով: Ձի «որք կամին մեծանալ՝ անկանին ի փորձութիւն եւ յորդայք, եւ ի բազում ցանկութիւնս անմիտս եւ վնասակարս, որք ընկղմեն զմարդիկ ի սասակումն եւ ի կորուստ» (Ա. Տիմ. Զ. 9):

Չփորձուինք մտածելու, թէ խելք ունեցողը պարկեշտ ըլլալու պէտք չունի: Չփորձուինք մտածելու, թէ բարեմտութիւնն ու խոնարհութիւնը տկարութիւններ են: Չփորձուինք մտածելու, թէ միջոցներու մէջ խտրութիւն չգնելը ճարտարութիւն է: Ճշմարիտ իմաստութիւնը պարկեշտութեան եւ ուղղամտութեան մէջ կրնայ ծաղկիլ եւ պտուղ տալ, այլապէս ամէն իմացական կարողութիւն, իր բոլոր հնարաւորութիւններով եւ իրաւ արժէքներով իսկ, փռչի կը դառնայ ու կը ցնդի, եւ կամ առաջին անձրեւին ցեխի կը վերածուի:

Ուրիշ փորձութիւն մը, որ աւերներ կը զործէ մեր եկեղեցական կեանքին մէջ, նիւթական շահի ծարաւն է, «զի արմատ ամենայն չարեաց արծաթսիւքն է, որում ոմանց ցանկացեալ՝ վիւպեցան ի հաւատոցն, եւ զանձինս արկին ընդ բազում ցաւով» (Ա. Տիմ. Զ. 20):

Ի՞նչ ունայնութիւն հոգեւորականի մը համար դրամը սիրել եւ ձգտիլ հարստութիւն դիզելու, երբեմն նոյնիսկ տղեղ եւ ապօրէն միջոցներով: Ինչքան աղքատութիւն, ինչքան խեղճութիւն կայ այդպիսի հարստութեան մէջ: Եւ ինչքան անկորնչելի հարստութիւն ունին բոլոր անոնք, որ Պօղոս առաքելի նման ոչինչ ունին, բայց ամէն բան ունին:

Սպանիշ փորձութիւն մըն ալ նախանձն է ու ատելավառ ոգին, որ ատեն ատեն իր սեւ ճանկին մէջ կ'առնէ նաեւ մեր հոգեւորականներէն ոմանց սրտերը, «որ տալին ի խնդիրս հակառակութեան, ուստի լինին նախանձ, հեռ եւ հայհոյութիւն եւ կարծիք չարեաց» (Ա. Տիմ. Զ. 4), եւ «որ հեռ եւ նախանձ, անդ է անկարգութիւն եւ ամենայն իր չարք» (Յակ. Գ. 16):

Հարկ է մաքրել և ազատել սիրտը նախանձի ժանգէն, որպէսզի հոգիին արախն մէջ կարենան աճիլ և դէպի արև բարձրանալ ոսկի հասկերը սուրբ զգացումներուն, արդար մտածումներուն և սիրոյ գործերուն: Հսկեցէք և արթուն մնացէք մանաւանդ, որ սէրը չցամաքի: Սէրը սրբողն ու սրբացնողն է մեր սրբութիւնը:

Եղբայրներ Մեր ի Քրիստոս, ճշմարտապէս սիրենք զիրար, սիրենք մեր Եկեղեցին, սիրենք մեր հաւատացեալները: Մարդիկ երբ բան մը միատեղ կը սիրեն, զիրար ալ կը սիրեն: Ով որ կը նախանձի և կ'ատէ իր հոգեւոր եղբայրը, այդ նշան է, որ ան չի սիրեր Եկեղեցին: Զիրար սիրելով, իրարու աշխատանք զնահատելով, եղբայրաբար իրարու օգնելով, պարկեշտօրէն իրարու զործակցելով, իրաւ սիրած պիտի ըլլանք մեր Եկեղեցին, մեր Ազգը և մեր սուրբ գործը:

Ո՛վ Տէր, հեռացուր մեր Եկեղեցիի սահմաններէն իշխելու մարմաջը, արծաթսիրութիւնը և նախանձը, և վերադարձուր Քու բոլոր ծառաներդ դէպի պարզ և յաւերժ ճշմարիտ պատուիրանները, որ մեզ աւետուած են մեր նախնեաց լոյս հաւատքով:

Սիրելիք Մեր, «յիւեցե՛ք զառաջնորդս մեր, որ խօսեցան մեզ զբանն Աստուծոյ, հայեցեալք յեղս զնացից նոցա՝ նմանող եղերով հաւատոցն» (Եբր. ԺԳ. 7), և «օրինակ լինի՛ջիք հաւատացեալոց՝ բանիւք, զնացիւք, սիրով, հաւատով եւ սրբութեամբ» (Ա. Տիմ. Դ. 12):

Թող Աստուած օրհնէ մեր Ս. Եկեղեցին և անոր բոլոր սպասաւորները, և դալարեցնէ անոնց զաւազանը ինչպէս Ահարոնին, «որ արձակեաց ճառաւիղ եւ ծաղկեաց ծաղիկ եւ երեւցոյց ընկոյզ» (Թիմ. ԺԷ. 8):

Շնորհք Տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի ընդ ողուոյ ձերում, ամէն:

Տպաւ կոնդակս ի 14-6 յունուարի
1957 Փրկչական ամի,
եւ ի տումարիս Հայոց ՌՆԶ,
ի Ս. Էջմիածին, Հմբ. 58

(ԿՆԻՔ)

ՎԱԶԳԷՆ Ա.

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐԻ ԵՒ
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

★ ★ ★

Փոխան ՍԻՈՆ-ի խօսքին, ամսագրիս այս թիւին մէջ կը հնչէ մեր սիրեցեալ եւ Վեհափառ Հայրապետի ծայնը: Եւ որքա՛ն պատեհ ժամանակին կուգայ այդ Հայրական եւ հեղինակաւոր ծայնը: Կը գտնուինք Մեծ պահոց ապաշխարանքի օրերու մէջ: Եկեղեցականներս յատկապէս այս շրջանին է որ մեր հաւատացեալ հօտը կը հրաւիրենք յուղղութիւն եւ յապաշխարութիւն: Նոյնը կ'ընէ Եկեղեցւոյ Գերագոյն Պետը բոլոր հոգեւոր պաշտօնեաներու: «Զի գուցէ որ այլոցն քարոզեմք՝ մեք անպիտան գտանիցիմք»: Ընդունինք իր խօսքերը վերէն իջնող ոսկեհոս անծրելին պէս. որովհետեւ արդարեւ «տեղ ոսկի տեղայր» Վեհափառ Հայրապետի այս սրբատառ կոնդակին մէջ: Թող այդ պարզ բայց պայծառ պատգամները արծարծեն մեր հոգիներու մէջ «զշնորհսն Սաստուծոյ որ են ի մեզ ի ձեռնադրութենէ» բահանայական սուրբ կարգի:

ԽՄԲ.